

5.13. Ստանդարտացումը, սերտիֆիկացումը և հավատարմագրումը 2007թ. հունվար-մարտին

Ըստ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ամփոփ տեղեկատվության, 2007թ. հունվար-մարտին ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման և նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների պահպանման պետական վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով.

Ստանդարտացում: Ընդունվել և պետական գրանցում է ստացել ՀՀ տեխնիկական 108 պայման: Թողարկվել է 2 անուն տեղեկատվական նյութ:

Սերտիֆիկացում: Տրվել է համապատասխանության 2448 սերտիֆիկատ, որից 2238-ը՝ ներմուծվող, 16-ը՝ արտահանվող արտադրանքի համար, մնացած 194-ը տրվել է ՀՀ-ում արտադրվող սերիական արտադրանքի համար: Սերտվել է արտադրանքի սերտիֆիկացման 4 հայտ, որից 2-ը՝ արտադրանքի անհամապատասխանության պատճառով:

Հավատարմագրում: ՀՀ տարածքում հավատարմագրվել է սերտիֆիկացման 4 մարմին և 9 լաբորատորիա:

Ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման գործունեության համեմատական ցուցանիշները, 2007թ. հունվար-մարտ

(հավելածր /նվազումը «-» նշանով/)

	Ընդամենը, միավոր	Հունվար-մարտի համեմատ, %		
		2004թ.	2005թ.	2006թ.
Պետական գրանցում ստացած տեխնիկական պայմանների քանակը	108	96.4	66.2	- 6.1
Թողարկված տեղեկատվական նյութերի քանակը	2	- 33.3	2.0 անգամ	- 33.3
Տրված համապատասխանության սերտիֆիկատների քանակը որից՝	2448	72.0	42.1	26.6
ներմուծվող արտադրանքի համար	2238	82.5	53.4	28.7
արտահանվող արտադրանքի համար	16	- 85.8	- 80.0	14.3
Արտադրանքի սերտիֆիկացման մերժված հայտերի քանակը	4	- 50.0	0	- 55.6

Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանք: 2007թ. հունվար-մարտին անորակության պատճառով չեն սերտիֆիկացվել ներմուծված և ՀՀ-ում արտադրված արտադրանքի որոշ տեսակներ:

Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանքի բաշխվածությունը ըստ երկրների, 2007թ. հունվար-մարտ

Երկիրը	Արտադրանքի անվանումը	Քանակը
Հայաստանի Հանրապետություն	Օդի «Էտյուդ»	սերիական արտադրություն
Մեծ Բրիտանիա	Կերակրի աղ	225 կգ